ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2018թ. հունիսի 18-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհուրդ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Ազգային փոքրամասնությունների ԵԽ շրջանակային կոնվենցիայի և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի ուժի մեջ մտնելու 20-ամյակի առթիվ կազմակերպված «Փոքրամասնությունները և փոքրամասնությունների լեզուները փոփոխվող Եվրոպայում» խորագրով բարձրաստիճան համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Համաժողովի ընթացքում քննարկվել են փոքրամասնությունների իրավունքների լիարժեք իրացմանը և այդ իրավունքների միջազգային պաշտպանության ապահովման հարցում ԵԽ չափորոշիչների կարևորությանը, փոքրամասնությունների իրավունքների ապահովման տեսանկյունից տեխնոլոգիական նորարարության կիրառմանն ու քաղաքացիական հասարակության դերին առնչվող հիմնահարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդից ստացել է Ազգային փոքրամասնությունների ԵԽ շրջանակային կոնվենցիայի և Տարածաշրջանային

կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի ուժի մեջ մտնելու 20-ամյակի առթիվ կազմակերպվող բարձրաստիճան համաժողովին մասնակցելու հրավեր: ԵԽ նախարարների կոմիտեում Խորվաթիայի նախագահության շրջանակներում կազմակերպվող բարձրաստիճան համաժողովը տեղի է ունեցել Ֆրանսիայի Հանրապետությունում (Ստրասբուրգ) ս.թ. հունիսի 18-ից 19-ը:

Համաժողովի ընթացքում ունեցած ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը բարձր է գնահատել ԵԽ շրջանակային կոնվենցիայի և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կարևորությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում:

Վիգեն Քոչարյանն անդրադարձել է Կոնվենցիայով սահմանված հիմնական սկզբունքների ապահովման ու գործնական կիրառման ոլորտում գրանցված ձեռքբերումներին և առկա մարտահրավերներին, ինչպես նաև ներկայացրել փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում նորարարական տեխնոլոգիաների ազդեցության բացասական և դրական կողմերը:

Նախարարի տեղակալը ներկայացրել է նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ-ում տիրող իրավիճակը, նշելով, որ մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որում իրենց արտացոլումն են գտել Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությամբ ներկայացված առաջարկությունները:

Վիգեն Քոչարյանը վերահաստատել է ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ ձեռնարկելու անհրաժեշտ բոլոր միջոցները ազգային փոքրամասնությունների իրավունքների լիարժեք ապահովման և իրացման գործում՝ հիմնված մարդկային արժանապատվության, օրենքի գերակայության, հավասարության պահպանման և խտրականության բացառման վրա:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Վիգեն Քոչարյանը հանդիպումներ է ունեցել Ազգային փոքրամասնությունների ԵԽ

շրջանակային կոնվենցիայի խորհրդակցական կոմիտեի և Եվրոպայի խորհրդի քարտուղարության ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են «Ազգային փոքրամասնություններին մասին» ՀՀ օրենքի նախագծի վերջնական տարբերակը՝ անդրադարձ կատարելով օրենքի նախագծում նշված կառույցների կողմից մշակված չափորոշիչների արտացոլված լինելուն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ